ԿԱՐՃԻՔ

«ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-Ի N 1104-Ն և ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 982-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021թ. հուլիսի 2-ին իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am կայքում ՀՀ բարձր տեխնոլոգիաների և արդյունաբերության նախարարության կողմից հրապարակվել է ՀՀ Կառավարության որոշման փոփոխության նախագիծ՝ «Հայաստանի Հանրապետության Կառավարության 2012թ. օգոստոսի 30-ի N 1104-Ն և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվակաի սեպտեմբերի 22-ի N 982-Ն որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին»:Համաձայն նախագծով առաջարկվող փոփոխությունների Նախարարությունը նախաձեռնել է վերհանել e-gov.am և govtravel.am կայքում առկա զգայուն և ռիսկային տեղեկատվությունը[1]: Ըստ նախագծի՝ տեղեկատվության վերհանումից և հստակեցումից հետո իրականացվել է ՀՀ Կառավարության 2012թ. օգոստոսի 30-ի 1104-Ն և ՀՀ Կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 982-Ն որոշումներում համապատասխան փոփոխություններ վերոնշյալ տեղեկատվությունը արգելափակելու համար:

Հրապարակված մեկ այլ նախագծով փոփոխություններ են նախատեսվում ՀՀ Կառավարության 2012թ. օգոստոսի 30-ի N 104-Ն և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016թ. սեպտեմբերի 22-ի N 982-Ն որոշումների մեջ[2]: Համաձայն առաջարկվող փոփոխությունների՝ սահմանափակվում է պետական աշխատակիցների գործուղումների վերաբերյալ հաշվետվությունների հրապարակումը, ինչպես նաև մեկ անձից կատարվող գնումների հաշվետվություններին վերաբերող առանձին տվյալներ: Մասնավորապես, առաջարկվում է փոփոխություն կատարել Կառավարության 2012թ. օգոստոսի 30-ի N 1104-Ն որոշման հավելվածի 5-րդ կետի 10-րդ ենթակետում, որի հիման վրա այլևս հրապարակման ենթակա չեն լինի գնման առարկան, կատարման հիմքը, գնման պահանջի ծագման հիմքը և ամբողջական գնման պայմանագրի պատճեն:

Նախագծի հեղինակների կողմից որպես հիմնավորում ներկայացվում է այն հանգամանքը, որ Նախարարությունը, համագործակցելով ՀՀ Ազգային անվտանգության ծառայության հետ, ուսումնասիրել է e-gov.am և govtravel.am կայքում ներկայացված զգայուն ռիսկային տեղեկատվությունը, ինչպես նաև հաշվի առնելով վերջին պատերազմով պայմանավորված անձնական և պետական տվյալների արտահոսքի նոր ռիսկերը կատարել է «Էկենգ» ՓԲԸ կողմից ներկայացված իրավական ակտերում անհրաժեշտ փոփոխությունները վերոնշյալ տեղեկատվությունը e-gov.am կայքում արգելափակելու համար: Ըստ այդմ, մեկ անձից իրականացված գնումների հաշվետվություններում ռիսկային տվյալներ են համարվում գնման առարկան, կատարման հիմքը, գնման պահանջի ծագման հիմքը և ամբողջական պայմանագրի պատճենը: Այս ամբողջ տեղեկատվությունը առաջարկվում է հեռացնել e-gov.am կայքից[3]:

Գտնում ենք, որ առաջարկվող փոփոխությունները խնդրահարույց են հանրային կառավարման ոլորտում թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքների ապահովման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների և հանձնառությունների ապահովման

[1] https://www.e-draft.am/projects/3381
[2] https://www.e-draft.am/projects/3381/about
[3] https://www.e-draft.am/projects/3381/justification

տեսանկյունից, հակասում են ՀՀ սահմանադրության 51-րդ հոդվածի պահանջներին, իսկ ներկայացված հիմնավորումը՝ ոչ բավարար են, մի քանի պատճառներով՝

Մեկ անձից իրականացված գնումների հաշվետվություններում որպես ռիսկային տվյալ որակված տեղեկությունների մեծ մասը ներառված է Պետական գնումների մասին վերանայված համաձայնագրի (ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 05.06.2015թ.)[4] ՝ «Գնման մասին տեղեկատվության թափանցիկություն» վերտառությամբ XVI հոդվածում՝ որպես հրապարակման ենթակա տեղեկատվություն: Այսպես,

Համաձայնագրի շրջանակներում յուրաքանչյուր պայմանագրի կնքումից ոչ ուշ, քան 72 օր հետո, պատվիրատուն պետք է հրապարակի ծանուցում համապատասխան թղթային կամ էլեկտրոնային եղանակով՝ թվարկված III Հավելվածում: Եթե մարմինը ծանուցումը հրապարակում է միայն էլեկտրոնային եղանակով, ապա տեղեկատվությունը պետք է հասանելի լինի ողջամիտ ժամանակահատվածում:

Ծանուցումը ներառում է առնվազն հետևյալ տեղեկատվությունը.

ա. գնված ապրանքների կամ ծառայությունների նկարագրությունը,

բ. պատվիրատուի անունն ու հասցեն,

գ. հաղթող մատակարարի անունն ու հասցեն,

դ. հաջողված հայտի արժեքը կամ ամենաբարձր և ամենացածր առաջարկները, որոնք հաշվի են առնվել կոնկրետ պայմանագրի կնքման ժամանակ,

ե. պայմանագրի կնքման ամսաթիվը, և

զ. գնման կիրառված մեթոդի տեսակը և, եթե XIII Հոդվածին համապատասխան սահմանափակ մրցույթ է իրականացվել, սահմանափակ մրցույթի կիրառումը արդարացնող հանգամանքների նկարագրությունը:

Ավելին, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածը, վերանայված համաձայնագրին համապատասխան, սահմանում է կնքված պայմանագրի մասին հայտարարության հրապարակման պահանջ: Մասնավորապես, Պատվիրատուն տեղեկագրում պարտավոր է հրապարակել կնքված պայմանագրի մասին հայտարարություն ոչ ուշ, քան պայմանագիրը կնքվելուն հաջորդող առաջին աշխատանքային օրը: Կնքված պայմանագրի մասին հայտարարությունը պարունակում է հետևյալ տեղեկությունները. 1) գնման առարկայի համառոտ նկարագրությունը. 2) պատվիրատուի անվանումը և հասցեն. 3) պայմանագրի կնքման ամսաթիվը. 4) ընտրված մասնակցի (մասնակիցների) անվանումը և գտնվելու կամ բնակվելու վայրը. 5) մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները և պայմանագրի գինը. 6) մասնակիցների ներգրավման նպատակով օրենքի համաձայն իրականացված հրապարակումների մասին տեղեկությունները (եթե կիրառելի են). 7) կիրառված գնման ընթացակարգը և դրա ընտրության հիմնավորումը:

Արձանագրենք նաև, որ 2011թ. սեպտեմբերին Հայաստանի Հանրապետությունը միացել է "Բաց կառավարման գործընկերություն" նախաձեռնությանը: Պետական գնումների թափանցիկությունը, հաշվետվողականությունը և օրինականությունն ապահովելու նպատակով ՀՀ կառավարությունն ստանձնել է գնումների առկա համակարգը բարելավելու աշխատանքները: Պարտավորությունը, ըստ էության, համարվել է կատարված՝ հիմքում դնելով նաև ՀՀ կառավարության 30.08.2012թ. թիվ 1104-Ն որոշման հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարությունը մեկ անձից կատարվող գնումների վերաբերյալ

[4] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=101098

տեղեկատվությունը, այդ թվում՝ կնքված պայմանագրերը, ՀՀ կառավարության www.e-gov.am կայքում հրապարակելու հանգամանքը[5]:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ առաջարկվող փոփոխությունը խնդրահարույց է ՀՀ-ի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների տեսանկյունից:

Բացի այդ,մեկ անձից գնումների գործընթացը կոռուպցիայի տեսանկյունից առավել ռիսկայիններից մեկն է, ինչով պայմանավորված անհրաժեշտ է ողջ գործընթացի հրապարակայնություն և թափանցիկություն՝ հնարավոր ռիսկերը կանխելու համար: Մեկ տասնամյակից ավել Հայաստանի Հանրապետությունը քայլեր է ձեռնարկել պետական գնումների թափանցիկությունը, հաշվետվողականությունը և օրինականությունը ապահովելու նպատակով, ինչի ձեռքբերումներից մեկն էլ 2012թ. գործով մեկ անձից կատարվող գնումների վերաբերյալ համալիր տեղեկատվության հրապարակայնության ապահովումն է:

Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում տրված հանձնարարականների մեջ զգալի թիվ են կազմել հատկապես գնումների գործընթացը կարգավորող օրենսդրության ու պրակտիկայի բարելավումը: Օրինակ, Արեւելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանցի կողմից ՀՀ-ում կոռուպցիայի դեմ պայքարի առնչությամբ ձեռնարկվող քայլերի մեջ մշտապես շեշտվել է գնումների թափանցիկության հարցը[6]:

Նախագծով առաջարկվում է նաև արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրը ելնելով դրա կառուցվածքում ներկայացվող զգայուն տեղեկատվությունից (օբյեկտների հասցեներ, կազմակերպա-իրավական ձև, համարակալում և այլն) ամբողջապես հեռացնել e-gov.am կայքից: Միևնույն ժամանակ նախագծով առաջարկվում է e-gov.am կայքից հեռացնել օգտակար հանածոների և ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման ու երկրաբանական ուսումնասիրության նպատակով ընդերքօգտագործման իրավունք ունեցող ընկերությունների անվանման, գործունեության հասցեների, թույլտվության, պայմանագրի տրման համարները և մնացյալ ամբողջ տեղեկատվությունը:

Գտնում ենք, որ առաջարկվող փոփոխությունը խնդրահարույց է Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (հետայսու՝ ԱՃԹՆ) շրջանակներում ՀՀ-ի կողմից ստանձնած հանձնառությունների շրջանակում[7]: ԱՃԹՆ-ի ստանդարտի իրականացման շրջանակներում պետական մարմինների և ընդերքօգտագործող ընկերությունների կողմից լրացվում են հաշվետվություններ, որոնք թույլ են տալիս բացահայտել ընկերությունների եկամուտներին, դրանց կողմից կառավարությանը կատարած վճարումներին, ինչպես նաև պետության ստացած եկամուտներին և այդ հոսքերի կառավարմանը վերաբերող տարբեր տեղեկություններ: Նաև պահանջվում է, որ ընկերությունները և պետական մարմինները բացահայտեն երկրաբանական ուսումնասիրության, բնական պաշարների հետախուզման, արդյունահանման, արտահանման և ֆինանսական հոսքերի վերաբերյալ, ինչպես նաև ընկերությունների առնչությամբ լիցենզիաների տրամադրմանը կամ փոխանցմանը վերաբերող տեղեկություններ: Արդյունքները համադրվում են Անկախ ադմինիստրատորի կողմից և ամենամյա կտրվածքով հրապարակվում արդյունահանող ճյուղերի մասին այլ տեղեկությունների հետ մեկտեղ՝ ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջներին համապատասխան: Բացի ամենամյա ԱՃԹՆ զեկույցից, ԱՃԹՆ իրականացնող երկրները

---

[5] https://www.ogp.am/hy/commitment1.4/

[6] Anti-corruption network for eastern Europe and Central Asia, Anti-corruption Reforms in Armenia, Round 3 Monitoring of the Istanbul Anti-Corruption Action Plan, 2014, 2015, 2016.

[7] https://www.eiti.am/hy/

նաև հրապարակում են տարեկան գործունեության հաշվետվություններ: Արձանագրենք նաև, որ Նախագծով առանձնացված տեղեկատվության զգալի մասը հրապարակվում է Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ զեկույցում[8]:

Միաժամանակ, անհրաժեշտ է փաստել, որ չստորադասելով ազգային անվտանգության շահը և առանձին դեպքերում պետական պաշտոններ զբաղեցնող անձանց տեղաշարժի վերաբերող տեղեկատվությունը գաղտնի պահելու անհրաժեշտությունը, գտնում ենք, որ առաջարկվող օրենսդրական բացարձակ արգելքն անհամաչափ է հետապնդվող նպատակին և անհրաժեշտ չէ հանրային շահի տեսանկյունից, քանի որ այն պարունակում է կոռուպցիոն ռիսկեր, ինչը պակաս կարևոր չէ պետական կառավարման համակարգում թափանցիկ և հաշվետու կառավարման սկզբունքների ապահովման համար:

Հաշվի առնելով վերը ներկայացված հանգամանքներն ու մտահոգությունները՝ առաջարկում ենք քննարկվող նախագծերը հանել շրջանառությունից և ապահովել տեղեկատվության ազատության և ազգային անվտանգության պաշտպանության համաչափության սկզբունքների հիման վրա նոր նախագծերի մշակում ոլորտի մասնագետների հետ համագործակցությամբ:

Առաջարկում ենք նախագիծը դիտարկել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի և «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի կարգավորումների շրջանակներում, ինչը հնարավորություն կտա կանխատեսելիության և իրավական որոշակիության շրջանակներում կարգավորել տեղեկատվության այն տեսակները, որոնց սահմանափակումը չի կարող որակվել որպես տեղեկատվության ազատության իրավունքի խախտում:

Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ

Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն

Բաց հասարակություն հիմնադրամներ-Հայաստան

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ

[8] https://eiti.org/files/documents/armenian_2016-2017_armenia_eiti_report.pdf